Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-33.6-Ղ4-3 բաժնի պետ(2024-02-27)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչություն | Երևանի հաշվառման-քննական բաժին | բաժնի պետ, (27-33.6-Ղ4-3)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.5 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Գաջեգործների 76:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. ապահովում է օրենքով իրեն վերապահված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական վարույթի իրականացման աշխատանքները.
2. ապահովում է իր իրավասության սահմաններում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար նախատեսված տրանսպորտային միջոցների սեփականության, գրավի իրավունքի պետական գրանցման և տրանսպորտային միջոցների պետական հաշվառման իրականացման աշխատանքները.
3. ապահովում է իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարորդական իրավունքի վկայական ստանալու քննությունների ընդունման և տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի ազգային վկայականներ տալու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրանսպորտային միջոցներ վարելու միջազգային վարորդական իրավունքի վկայականներ տալու, վարորդական իրավունքի վկայականների փոխանակման և կորած վարորդական իրավունքի վկայականների փոխարեն դրանց կրկնօրինակի տրամադրման աշխատանքները.
4. ապահովում է իր իրավասության սահմաններում գյուղատնտեսական տեխնիկայի պետական հաշվառման իրականացման աշխատանքները.
5. ապահովում է իր իրավասության սահմաններում տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի վկայականների տրամադրման, դրանց փոխանակման և կորած վարորդական իրավունքի վկայականների փոխարեն դրանց կրկնօրինակի տրամադրման աշխատանքները.
6. ապահովում է իր իրավասության սահմաններում օրենքով սահմանված դեպքերում պետական մարմիններին տեղեկատվության փոխանցման աշխատանքները:

Իրավունքները.

- պահանջել և ստանալ տեղեկատվություն, համապատասխան նյութեր, փաստաթղթեր օրենքով իրեն վերապահված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական վարույթի իրականացման համար
- պահանջել և ստանալ տեղեկատվություն, անհրաժեշտ փաստաթղթեր և համապատասխան իրավական ակտեր՝ իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարորդական իրավունքի վկայական ստանալու քննությունների ընդունման և տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի ազգային վկայականներ տալու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրանսպորտային միջոցներ վարելու միջազգային վարորդական իրավունքի վկայականներ տալու, վարորդական իրավունքի վկայականների փոխանակման և կորած վարորդական իրավունքի վկայականների փոխարեն դրանց կրկնօրինակի տրամադրման համար.
- պահանջել և ստանալ տեղեկատվություն և անհրաժեշտ փաստաթղթեր սեփականատիրոջից՝ գյուղատնտեսական տեխնիկայի պետական հաշվառման նպատակով.
- համագործակցել Վարչության հաշվառման-քննական ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի հետ և ստանալ հատուկ հաշվառման ձևաթղթեր, հաշվառման համարանիշեր.
- ներկայացնել առաջարկություններ Վարչության պետին հաշվառման-քննական ծառայությունների մատուցման գործունեության արդյունավետության բարձրացման և տեխնիկական հագեցվածության կատարելագործման վերաբերյալ.
- նախաձեռնել և վարել բանակցություններ, մասնագիտական և աշխատանքային քննարկումներ օտարերկրյա պետությունների նմանատիպ գործառույթ իրականացնող մարմինների ներկայացուցիչների հետ.
- ներգրավվել տարբեր հանձնաժողովներում, աշխատանքային խմբերում:

Պարտականությունները.

- հետևել օրենքով իրեն վերապահված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական վարույթի իրականացման աշխատանքներին.
- հսկողություն սահմանել ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար նախատեսված տրանսպորտային միջոցների սեփականության, գրավի իրավունքի պետական գրանցման և տրանսպորտային միջոցների պետական հաշվառման իրականացման աշխատանքների նկատմամբ.
- հսկողություն սահմանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարորդական իրավունքի վկայական ստանալու քննությունների ընդունման և տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի ազգային վկայականներ տալու, ինչպես նաև Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրանսպորտային միջոցներ վարելու միջազգային վարորդական իրավունքի վկայականներ տալու, վարորդական իրավունքի վկայականների փոխանակման և կորած վարորդական իրավունքի վկայականների փոխարեն դրանց կրկնօրինակի տրամադրման աշխատանքների նկատմամբ.
- հետևել գյուղատնտեսական տեխնիկայի պետական հաշվառման իրականացման աշխատանքներին.
- հսկողություն սահմանել տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի վկայականների տրամադրման, դրանց փոխանակման և կորած վարորդական իրավունքի վկայականների փոխարեն դրանց կրկնօրինակի տրամադրման աշխատանքների նկատմամբ.
- ներկայացնել իր իրավասության սահմաններում օրենքով սահմանված դեպքերում պետական մարմիններին տեղեկատվություն.
- հետևել Բաժնի գործառույթներին առնչվող հրամանների, որոշման նախագծերի, տեղեկանքների, գրությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստման ու ստորագրման ներկայացման աշխատանքներին:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

- ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության
առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստ

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Ժամանակի կառավարում
  - Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: